# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 փետրվարի 2023 թվականի N 126 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1501-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Համահայկական ամառային ութերորդ խաղերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտե ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 1501-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) «ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար» բառերը հանել.

2) «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար» բառերը փոխարինել «ՀՀ փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ» բառերով.

3) «ՀՀ ոստիկանության պետ» բառերը փոխարինել «ՀՀ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ» բառերով.

4) «ՀՀ Արագածոտնի մարզպետ» բառերը հանել.

5) «ՀՀ Շիրակի մարզպետ» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ».

6) «Հ. Պողոսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի երևանյան գրասենյակի ղեկավար (համաձայնությամբ)»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

02.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ